հաշվեհամարին մուտք է եղել 15,361,000.00 ՀՀ դրամ և նույն օրը՝ 02.12.2022 թվականին, նույն՝ 2471004455650000 հաշվեհամարից ելքագրվել է 15,361,000.00 ՀՀ դրամ գումար: Ավելին՝ <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ի կողմից 03.02.2023 թվականին տրված հաշվի քաղվածքի (ժամանակահատվածի համար) համաձայն՝ 02.12.2022-03.02.2023 թթ. ժամանակահատվածում 15,361,000.00 ՀՀ դրամ գումարի չափով դրամական փոխանցումը մերժելու և/կամ գումարը վերադարձնելու մասին նշումը բացակայում է:

Դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ի կողմից 03.02.2023 թվականին տրված հաշվի քաղվածքի (ժամանակահատվածի համար) համաձայն՝ 2471004455650000 հաշվեհամարի մնացորդը 03.02.2023 թվականի ժամը 14:45:10-ի դրությամբ կազմում է 0.00 ՀՀ դրամ:

Այսինքն Դատարանը փաստում է, հակառակն ապացուցված չլինելու պայմաններում գործում է այն կանխավարկածը, որ <<ՍԱՎԱ>> ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով հայտի ապահովման 15,361,000.00 ՀՀ դրամի չափով գումարը փոխանցվել է Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված <<900008000466>> գանձապետական հաշվին:

Ամփոփելով վերոգրյալը Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի կողմից գործի քննության ընթացքում չի հիմնավորվել և չի հաստատվել այն փաստական հանգամանքը, որ <<ՍԱՎԱ>> ՍՊԸ-ի կողմից չի վճարվել հայտի ապահովման գումարը, կամ որ հայտի ապահովումը ներկայացվել է Հրավերի պահանջներին անհամապատասխան:

Փաստերի դասավորվածության նման պայմաններում Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով Հայցվորի պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:

Դատարանի նշված պատճառաբանություններով և եզրահանգումներով հերքվում են Հայցվորի կողմից բերված փաստարկներն ու հիմնավորումները:

3. <u>Դատական ծախսերի վերաբերյալ Դատարանի իրավական վերլուծությունները.</u>

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածը, 109 հոդվածի 1-ին մասը, նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման և ներկայացված հայցադիմումի համար Հայցվորի կողմից վճարվել է օրենքով սահմանված չափին համապատասխան պետական տուրք, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

IV
(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ <<ՍԱՎԱ>> ՍՊԸ-ի՝ Երևանի քաղաքի ենթակայության մանկապարտեզների 2023 թվականի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 23.11.2022 թվականին հայտարարված թիվ <<ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-23/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի 09.12.2022 թվականի նիստի թիվ 4 արձանագրության 1.2-րդ կետով կայացված <<ՍԱՎԱ>> ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և նույն արձանագրության 2.1-րդ կետով վերջինիս 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by OHANYAN ARMAN 4014820192 Date: 2023.02.14 11:11:50 Ա. ՕՀԱՆՅԱՆ

Ծանոթություն- *եզրափակիչ դատական ակտը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:*

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՕՀԱՆՅԱՆ